ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 օգոստոսի 2017 թվականի N 139 - Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 50-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ և 72-րդ հոդվածներով և հիմք ընդունելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին>> N 1400-Ն որոշման N1 հավելվածի 12-րդ կետի <<դ>> ենթակետը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Ստեղծել ներքին աուդիտի կոմիտե հետևյալ կազմով՝

   Ա. Հարությունյան – Կոմիտեի նախագահ (ներքին աուդիտի կոմիտեի նախագահ),

   Հ. Հարությունյան – Կոմիտեի նախագահի տեղակալ,

   Վ. Նարիմանյան – Կոմիտեի նախագահի տեղակալ,

   Մ. Մակինյան – Կոմիտեի աշխատակազմի ղեկավար (առանց քվեարկելու իրավունքի),

Ս. Ասրյան – Կոմիտեի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ (ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի մայիսի 14-ի <<Ներքին աուդիտի կոմիտե ստեղծելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 200-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 50-Ա հրամանը:
3. Սույն հրամանի հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2017թ. օգոստոսի 31

Երևան